

«ՎԵՐԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԱՌԱՋԱԲԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաչատուր Աբովյանին առաջինը գնահատել է Ստեփանոս Նազարյանը 1853-ին տպագրած «Առաջին հոգեղեն կերակուր հայազգի երեխաների համար» ձեռնարկում¹:

Մեկ այլ առիթով, 1858-ին նա խոր ցավ է ապրում Խ. Աբովյանի՝ հայերի կողմից մոռացված լինելու փաստից և նկատում, թե նրան միշտ պիտի փառավորի արդարադատ եվրոպան. «Հայոց Հելիկոնի² վերա դափնիք չեն բուսնում արծանի գլխի համար. բայց փույթ չէ, Ապովյանը՝ ազգի մեծ բարերարը, թեև վաղուց արդեն մոռացված յուր հայրենիքումը, այնուամենայնիվ փառավորվում է և պիտի միշտ փառավորվի արդարադատ եվրոպական մարդկության պատմագրքի մեջ»³:

Մեծ լուսավորիչը չմոռացվեց նաև հայերի կողմից: Նրան ըստ արժանվույն գնահատողներից էր նաև Միքայել Նալբանդյանը, որն առավել հիմնովին մեկնաբանեց Խաչատուր Աբովյանի գլուխգործոցը՝ «Վերք Հայաստանին», ու պատգամեց մշտապես ուղեցույց ունենալ այդ գիրքը:

Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպին կցել է մեծարժեք մի առաջաբան, որն իրավամբ հայ մոր գրականության մանիֆեստն է:

«Վերքի» հեղինակը բազմակողմանի զարգացած գրող էր. ծանոթ էր եվրոպական գրականությանն ու արվեստին, քաջ տիրապետում էր մի շարք լեզուների և իր գրքի առաջաբանում, ինչպես արդեն ասվել է արվանագետների կողմից, շոշափել է հիմնականում երեք հարց.

ա) Ի՞նչ լեզվով գրել,

1 Տե՛ս Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 471:

2 Հելիկոն - Լեռնային զանգված Հունաստանում: Ըստ լեգենդի՝ Մուսաների սիրելի բնակատեղին, ուր նրանք հավաքվում էին Հիպոկորեոն շատրվանի շուրջն ու սրբազան անտառում՝ իրենց սրբավայրում: Պատմությունից հայտնի է, որ Կոնստանդին Մեծը ավար վերցրեց այդ սրբավայրի արձանները՝ Կոստանդնուպոլիսը զարդարելու համար:

3 Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, էջ 236:

բ) Ո՛րն համար գրել,

գ) Ո՛րն մասին գրել:

Առաջաբանի այս հարցադրումներին նախահիմք է դարձել հին աշխարհի պատմությունից քաղած մի լեզենդ, ըստ որի Պարսից արքա Կյուրոսը, երբ շատ երկրներ է գրավում, տիրում է նաև Լիդիացոց Կրեսոս թագավորի երկրին, ու մի պարսիկ զորավար թուրը հանում է Կրեսոսին սպանելու. այդժամ նրա 20 տարեկան մուսջ որդին լեզու է առնում ու ասում. «Անօրե՛ն, էդ ո՞ն էս սպանում, քաշի՛ր թուրդ ետ, չե՛ս տեսնում, որ առաջիդ Կրեսոսն ա՝ աշխարհի քի տերն ա»¹:

Այս փաստը, որ բերում է վեպի հեղինակը, իրականում եղել է հետևյալ ձևով: Լիդիայի թագավոր Կրեսոսը, որը գահակալել է Ք.ծ.ա. 561-546 թթ., եղել է առասպելական հարուստ և այդ հարստության համար պարտական էր Պաքթլի ոսկեբեր ավազներին: Նրա մայրաքաղաքը դեպի իրեն էր ձգում մտավորականների ու հետաքրքրասերների: Այն ժամանակին այցելել են եզովպոսն ու Սոլոնը: Եզովպոսը հունական առակագրության հայրն էր և ինչ-որ առումով եվրոպական առակագրության, իսկ Սոլոնը հայտնի էր իր մեծ հայրենասիրությամբ ու Աթենքում կատարած քաղաքական ու տնտեսական բարեփոխումներով: Ասում են, թե Սոլոնը, տեսնելով Կրեսոսի հյուրընկալության ծոխությունը, նրան ասել է. «Մի՛նչև իր մահը ավելի երջանիկ մարդ դժվար է տեսնել»: Պարսից արքա Կյուրոս Մեծը հաղթել է Կրեսոսին ու հրամայել է նրան այրել խարույկի վրա: Վերջինս մահապատժից առաջ արտաբերել է Իմաստունի անունը, և Կյուրոսը դրանից հետո գնահատելով նրան՝ ազատ է արձակել, դարձրել իր բարեկամը²:

Այս պատմական ակնարկը պարզորոշ ներկայացնում է «Վերքի» առաջաբանի հեղինակի խորաթափանցությունը: Օրհասական պահին Կրեսոսին փրկել է նրա իմաստությունն ու խելքը, ուրեմն հայ ժողովուրդն էլ կարող է փրկվել իր օրհասական վիճակից խելքի ու իմաստության միջոցով:

Ըստ Աբովյանի, եթե համաշխարհային պատմության մեջ Հայաստանն ու հայերը չեն հիշվում իրենց առասպելական հարստությամբ, ապա հիշվում են որպես Աստվածաշնչում հիշատակվող ժողովուրդ, թե Ասիայում և թե Եվրոպայում ընդունված է, որ Նոյն իջավ Արարատ լեռից, իսկ դա հայերի բնօրանն է. պատմական անցյալից Աբովյանը հիշում է Հայկին, Տրդատ Մեծին, Գրիգոր Լուսավորչին, Վարդան Մամիկոնյանին:

Հայկը մեր նախահայրն է, որը նվաճեց Հայաստանի անկախությունը, Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչը առաջինը ողջ աշխարհում քրիստոնեությա-

1 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 2004, էջ 61: Մեջբերման ուղղագրությունն ու կետադրությունը արդիականացրել ենք - Ա.Դ.:

2 Տե՛ս Le petit Robert 2, Paris, 1988, p. 468:

յունը հայտարարեցին պետական կրոն, իսկ Վարդան Մամիկոնյանը գիտակցված դիմեց անձնագոհության՝ ազգին նվիրվելու խորհրդանշիչ դառնալով:

Սրանք խաչատուր Աբովյանի առաջաբանի խորիմաստ հիշեցումներն են բոլոր նրանց, ովքեր կարողալու են իր վեպը:

Բոլոր ժամանակներում էլ կրթված մարդկանց հուզել է ընթերցասիրության խնդիրը: Գիրքը դիտվել է որպես ուսուցիչ: Պատահական չէ, որ ամեն մի կրոն ունի իր սրբազան մատյանը կամ մատյանները: Դրանք զորեղ հիշեցումներ են մարդկանց, թե ինչպես պետք է ապրել, որոնք են բանական մարդու պարտականությունները, ինչ է կյանքը և ինչպես դիմակայել կյանքի դժվարություններին: Աբովյանի ժամանակներում խզում էր առաջացել հայ ընթերցողի ու հայերեն գրքի միջև: Խոսքն, իհարկե, զանգվածային ընթերցողի մասին է և ոչ թե հոգևորականության: Ըստ Աբովյանի ընթերցասիրությունը զարգացնելու համար հարկավոր էր մարդուն մատուցել մոր գրականություն, այնպիսին, ինչպիսին ձեռք էր բերել զարգացած եվրոպան Վերածննդից հետո: Նույն երևույթը կար նաև Ռուսաստանում: Դրա համար էլ հայ երեխաները, երիտասարդները սիրով կարդում էին ռուսի՝ գերմանացու, ֆրանսիացու գրած գրքերը, որոնք հարստացնում էին նրանց միտքն ու հոգին. «Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները, որ մարդու սիրտ կարող է գրավիլ, չունքի սրտի բաներ էին. ո՛վ չի սիրիլ: Ո՛վ չի ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ գատ են, բայց մեր լեզվումը, թե էսպես բաներ ըլին, թող աչքս հանեն: Էլ ընչո՞վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս»¹:

Բաֆֆին ու հայ մոր գրականության մյուս գրողներն ընդունեցին Աբովյանի այս պահանջը, մորովի զարգացրին այն: Նրանք ապացուցեցին, թե ճշմարիտ գեղարվեստականությամբ օժտված գիրքը ինչ ներգործություն ունի հայ հասարակության վրա: Բաֆֆին Ս. Հայկունուն ուղղված իր ընդդիմախոսության մեջ հիշեցնում է ամերիկյան կին գրող Բիչեր Ստոուի «Քեռի Թոմի տնակը» վեպը, որը վերջ դրեց Միացյալ Նահանգների հարավի ու հյուսիսի միջև բռնկված քաղաքացիական պատերազմին, վերջ դրեց սևամորթների ստրկությանը: Այդ գիրքն է եղել ԱՄՆ-ի ամենաժողովրդավար նախագահի՝ Աբրահամ Լինքոլնի սիրելի գիրքը:

Խ. Աբովյանը խոսում է հայ եկեղեցական գրականության մասին: Բնավ չպետք է կարծել, թե նա դեմ է այդ գրականությանը՝ ո՛չ: Այդ գրականությունը զանգվածային լինել չէր կարող, որովհետև աստվածաբանական փիլիսոփայությունն ունի իր բարդությունը ու հասանելի է քչերին՝ միայն հատուկ ձևով

1 Խ.Աբովյան, Վերջ Հայաստանի, էջ 63:

ու երկարատև ուսումնառություն անցած մարդկանց: Մեծ գրողը դնում է նաև անտիկ գրականության հայերենի թարգմանելու խնդիրը: Հայ երեխաները սիրով կկարդան Հոմերոս, Հորացիոս, Վիրգիլիոս, Սոֆոկլես: Նա բնավ չի թերագնահատում Գրիգոր Նարեկացուն ու նրա «Մատենան ողբերգութեան» երկը, պարզապես քաջ գիտակցում է, որ վերջինս իր խոր աստվածաբանական փիլիսոփայությամբ բոլորին հասանելի չի, այն էլ իր խրթին գրաբարով:

Առաջաբանի հեղինակը հայ գրականությունն ուղղում է դեպի ժողովրդական բանահյուսությունը՝ այդ գրականության մեջ տեսնելով կենսական հզոր ազդակներ: Հայ պառավներն անգամ գիտեն հազարավոր իմաստուն զրույցներ, առած-ասացվածքներ, որոնք մեծարժեք են ու սիրված ժողովրդի կողմից:

Արժանը ցավով նշում է, թե իր ժամանակի Թուրքիայի ու Պարսկաստանի քաղաքական կյանքում խանի, շահի, սուլթանի մոտ որքան անվանի գործիչներ են եղել հայ ազգությամբ: Նա քաղաքական, զինվորական գործիչների օրինակներ չի բերում, սակայն այսօր էլ Պարսկաստանի պաշտոնական գրականության մեջ նշված է, որ Շահ Աբասը երկրի առաջընթացն ապահովելու գործում մեծապես օգտագործել է հայ զորավարներին, վաճառականներին, դիվանագետներին: Այդ նույն երկրներում հայերն աչքի են ընկել նաև որպես արվեստի մարդիկ. եղել են նշանավոր աշուղներ՝ ինչպես Քեշիշ օղլին, Քյոռ օղլին:

Վեպի առաջաբանում Արժանը հերքում է հայերի ուսումնասեր և ընթերցասեր չլինելը. «Թե մեր ազգը ուսումնասեր չի, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռուպենսոնի պատմությունը, Պղնձե քաղաքի հիմար գիրքը ձեռնեձեռն էր ման ածում»¹:

Դանիել Դեֆոյի Ռոբինզոն Կրուզոյի արկածների մասին պատմող գիրքը («The Life and Strange Surprising Adventures of Robinson Crusoe of York Mariner») այսօր էլ սիրված է պատանիների կողմից, և նրա հիման վրա նկարահանվել են մի շարք կինոնկարներ: Գիրքը գրվել է 1719 թվականին: Արժանը նկատել է, որ այդ վեպն առաջացրել է կենդանի հետաքրքրություն, որովհետև միայնակ մարդը պայքարում է բնության աղետների դեմ ու երկար տարիներ մնում է կենդանի, չի կորցնում փրկվելու հույսը, ստեղծագործ հնարամտությամբ կարողանում է բազում տարիներ ապրել անմարդաբնակ կղզում, նույնիսկ վարժեցնում է վայրենու՝ կոչելով նրան Ուրբաթ, սովորեցնելով վերջինիս խոսել անգլերեն և հրաժարվել տալով նրան մարդակերությամբ զբաղվելուց: Երկրորդ գիրքը, որ ձեռքեձեռք ման էին ածում, Պղնձե քաղաքի գիրքն է: Պղնձե քաղաքը առասպելական քաղաք է, որի մասին հիշատակություն կա «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի առաջին ծյուղի Բ մասում.

1 Խ.Արժան, Վերջ Հայաստանի, էջ 65:

Խաբար Պղնձն քաղքից տանք,
Քաջանց թագավորի աղջկանից տանք:
Սանասար-Քաղդասարի անուն բարձր էլավ,
Էնոնց ձեն ընկավ բոլոր էրկիր,
Թե խենց, խենց, խենց,
Երկու կտրիճ կա Սասուն:
Սանասարի քաջության ձեն որ էլավ,
Խոսքն ու զրուց գնաց, հասավ Պղնձն քաղաք,
Հասավ Քաջանց թագավորի աղջըկան,
Քառսուն-ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամին¹:

Հայ միջնադարյան ձեռագրերում հաճախ են հանդիպում զրույց-պատմությունների ժողովածուներ «Պատմութիւն վասն Պղնձն քաղաքին, որ է օրինակ աշխարհիս» խորագրով: Այդ ձեռագրերը գրվել են 17, 18, 19-րդ դարերում, դրանց հիման վրա Պղնձն քաղաքի զրույց-ժողովածուների բնագրեր են տպագրվել 18 և 19-րդ դարերում² Կ.Պոլսում, Կալկաթայում, Թիֆլիսում³:

Պղնձն քաղաքի պատմությունն այնքան սիրված է եղել հայ միջնադարյան գրականության մեջ, որ մտել է Ալեքսանդր Մակեդոնացու Պատմության մեջ⁴:

Ֆրեդերիկ Ֆեյդին Պղնձն քաղաքի ու Քաջանց թագավորի աղջկա վերաբերյալ «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանության մեջ ունի համապատասխան ծանոթագրություն: Նա քաղաքի անունը թարգմանում է «Ville de Fer»⁵:

«Վերքի» առաջաբանում հեղինակը խոսում է նաև գրաքննադատի դերի մասին: Նրա գրքի առաջին քննադատը եղել է «ազնիվ հայազգի պարոն դոկտոր Աղաֆոն Սմբատյանը», որը խրախուսում է Արուվյանին՝ ասելով. «Թե էդպես կշարունակեք, շատ հիանալի բան կդառնա»⁶:

Արուվյանը չի մոռանում հիշեցնել, թե իր այդ մորարական քայլի հիմքը եղել է սերը հարազատ ազգի նկատմամբ, և առանց մեծ սիրո չի կարող որևէ գլուխգործոց ստեղծվել ո՛չ գրականության ու ո՛չ էլ արվեստի բնագավառում:

Հայ հին հոգևոր դպրոցի պաշտոնապես ընդունած գիտաձյուղերը՝ ճարտասանությունը, տրամաբանությունը, քերականությունը «Վերքի» հեղինակը մի կողմ է դնում ու դառնում է իսկական ժողովրդական ասացող. «Միտը

1 Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 55:

2 Տե՛ս Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փափուլ թագաւորին, աշխատասիրութեամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1983, էջ 47:

3 Տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Հայկական խմբագրություններ, Աշխատասիրութեամբ Հասմիկ Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 597:

4 Տե՛ս Ա. Պոլսեցի, Ֆրեդերիկ Ֆեյդին հայազգետ, Երևան, 2008, էջ 34:

5 Խ. Արուվյան, Վերք Հայաստանի, էջ 66:

արի, միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի քո Քերականություն, ճարտասանություն, Տրամաբանություն ծախիր, դրադ դիր ու մեկ աշըդ էլ դու դառ, ինչ կըլի, կըլի. խանչալիդ քարը հո վեր չի ընկնիլ...»¹:

Ժողովրդական ասացող դարձած Արուսյանն իր վեպի համար հերոս է ընտրում 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Հայաստանի ազատագրման համար մարտնչած կամավորական ու ժողովրդական վրիժառու Բանաքեռցի ջիվան Աղասուն, որը աղքատ էր ու մեռած. «Ասեցի կեղծավորություն չանեն, նրան ընտրեցի»²:

«Վերքի» առաջաբանում հեղինակը շեշտում է գեղարվեստական գրականության ազգապահպանման գորավոր ուժը. «Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին»³: Այս միտքն առավել շեշտված կրկնվում է նաև վեպի մեջ:

Միքայել Նալբանդյանը «Մեռելահարցուկ» վեպի ընդարձակ տողատակային ծանոթագրության մեջ հիանալի է բացատրել «Վերք Հայաստանի» վեպի մտահղացման ու իրագործման նշանակությունը հայ ժողովրդի ազգապահպանման խնդրում. «Բոլոր ազգի համար է գրված, այնտեղ կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլև քաղաքացու, այլև հայոց կիսատ թերատ ուսումնականների համար ևս»⁴:

Վեպի առաջաբանը լիովին բացահայտում է Արուսյանի դիմումը Լիդիացոց Կրեսոս թագավորի մունջ որդու պատմությանը: Կրեսոսի մունջ որդին ինքն է, որ տեսնելով հարազատ ազգի օրհասը արձակում է ազգապահպանման ընդվզող ժիչը, որը պետք է լսվի դարեդար. «Էդ ո՛ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ծանաչում»⁵:

Նա իր երկի լեզուն համարում է մանկական թոթովանք՝ քաջ գիտակցելով աշխարհաբար լեզվի մշակման կարևոր անհրաժեշտությունը. «Երբ որ կմեծանամ, խրթին լեզվով էլ կխոսանք»⁶: Արուսյանի լեզվական կատարելությունն ու ճարտարությունն ուղղակի փայլում են նրա այլ լեզուներով գրված հոդվածներում ու հետազոտություններում:

Խաչատուր Արուսյանի գլուխգործոցը ծշտորեն ընկալել ու մեկնաբանել է մեծագույն հայագետ Նիկողայոս Ադոնցը: Նա բացատրում է, որ չնայած «հայ պատմական կյանքի խեցքեկ վիճակին» հայ գրականությունը ըստ դարերի ունեցել է իր հաջորդական զարգացումը. «Կարելի է ասել, եվրոպականին հա-

1 Խ. Արուսյան, Վերք Հայաստանի, էջ 65:

2 Նույն տեղում, էջ 66:

3 Նույն տեղում:

4 Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 1, Երևան, 1979, էջ 312:

5 Խ. Արուսյան, Վերք Հայաստանի, էջ 67:

6 Նույն տեղում:

մընթաց է: Ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ դասականություն և ռոմանտիզմ»¹: Նա զարմանալի ընդհանրություններ է տեսնում հայ միջնադարի ու եվրոպականի միջև: Ինչպես եվրոպան գրականությունից դեն նետեց լատին լեզուն. և մշակեց տարբեր երկրների ազգային լեզուներն, այնպես էլ հայերն արդեն միջնադարում անցան խոսակցական լեզվին, և հայ տաղասացները ժամանակակից էին Դանթեին ու Պետրարկային. «Գրաբարը մնաց, լատիներենի նման, եկեղեցականության գանձ առավելապես»²: Իսկ Աբովյանը կատարում է մեծ հեղաշրջում: Ն. Ադոնցն ասում է, որ Աբովյանն աշխարհաբարը նմանեցնում է Կրեստո թագավորի համր որդուն, որի լեզվի կապանքներն արձակվում են, երբ տեսնում է հոր օրհասական վիճակը. «Նոր լեզուն աղաղակում է հայի «Վերք»-երը, թոթովում է հայ միտքը ռոմանտիզմի ավազանում և ստեղծում է նոր գրականություն»³: Այդ նոր գրականության ազդարարը դարձավ «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը, որի դրույթներն ու պահանջները այսօր էլ կարևոր են հայ գրողների համար՝ գրականության ու կյանքի սերտ կապի առումով, որը բնավ չի հակասում ոչ անտիկ մտածողությանը, ոչ քրիստոնեական միջնադարին, այլ լրացնում է դրանց:

1 Ն. Ադոնց, Երկեր հինգ հատորով, Բ, Պատմաքանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 545:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 246: